**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

---

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 03/2025-Ա/Վ**

**ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ք. Երևան 13 հոկտեմբերի 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2025 թվականի հուլիսի 14-ին հարուցված թիվ 03/2025-Ա/Վ վարույթի նյութերը,

**ՊԱՐԶԵՑ**

***1. Նախապատմություն***

1. Հանձնաժողովը հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման պլանով հաստատված միջոցառումների հիման վրա իրականացված ուսումնասիրության, այդ թվում՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի պաշտոնատար անձի գույքի,

եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի տվյալների ստուգման արդյունքում պարզել է հետևյալը.

1.1 ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջի տվյալների համաձայն՝ Առուշ Առուշանյանը ՀՀ վարչապետի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N1019-Ա որոշմամբ նշանակվել է Գորիս համայնքի ղեկավարի պաշտոնակատար, իսկ 2017 թվականի նոյեմբերի 5-ին ընտրվել է համայնքի ղեկավար:

1.2 2021 թվականի հոկտեմբերի 17-ին Առուշ Առուշանյանը համամասնական ընտրակարգով ընտրվել է Գորիս համայնքի ավագանու անդամ: 2021 թվականի նոյեմբերի 9-ին Գորիս համայնքի ավագանու N 91 Ա որոշմամբ՝ ստանձնել է համայնքի ղեկավարի լիազորությունները:

1.3 Պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի տվյալների համաձայն Ա.Առուշանյանը 2008 թվականից հանդիսանում է «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 09212042) իրական շահառուն (հայտարարագրի հաստատման ամսաթիվ՝ 14/02/2024) 100 տոկոս բաժնեմասնակցությամբ, իսկ 01.08.2008-01.11.2017թթ. հանդիսացել է ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: 2017թ. նոյեմբերի 1-ից ընկերության գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում համայնքի ղեկավարի մայրը՝ Ասյա Ղազարյանը:

1.4 Պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն՝ Առուշ Առուշանյանը պաշտոնավարման ժամանակահատվածում «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությունից եկամուտ (շահաբաժին) չի ստացել:

1.5 Պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի տվյալների համաձայն՝ «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության նկատմամբ առկա է սահմանափակումների գրառում՝ 01.02.2024թ. և 02.02.2024թ.:

ՀՀ պետական ռեգիստրում գրանցված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թիվ 11705302 կատարողական վարույթի շրջանակներում՝ ՀՀ ՀԿԱԾ-ը 2024 թվականի հունվարի 31-ի որոշումներով արգելել է Առուշ Առուշանյանին որոշմամբ նշված գույքի, այդ թվում՝ «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի տնօրինման հետ կապված որևէ գործողության կատարում, ինչպես նաև «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ին արգելել է իրեն պատկանող անշարժ և շարժական գույքերի տնօրինման հետ կապված որևէ գործողության կատարում՝ բացառությամբ շրջանառու միջոցների (արտադրանք, հումք, ապրանքներ (աշխատանքի արդյունք

կամ ձեռքբերված գույք՝ նախատեսված վաճառքի կամ փոխանակման համար)): Չնայած կիրառված սահմանափակումներին՝ ընկերության գործունեության դադարեցման/լուծարման վերաբերյալ տեղեկություններ գրառված չեն, և ընկերությունը 2024 թվականին շարունակել է իր գործունեությունը:

1.6 Ըստ Պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի տվյալների՝ մինչև 2025 թվականի օգոստոս ամիսը «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության հավատարմագրային կառավարիչներ գրառված չեն եղել: Ա. Առուշանյանի՝ բաժնեմասի հավատարմագրային կառավարման մասին տվյալներ ներկայացված չեն եղել նաև վերջինիս 2021-2024 թվականների պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրերում:

1.7 Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը 2024 թվականի օգոստոսի 12-ին N 01/2488-2024 գրությամբ դիմել է Առուշ Առուշանյանին՝ պահանջելով ներկայացնել «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրը: Նշված գրության պատասխան Ա. Առուշանյանը Հանձնաժողովին չի ներկայացրել:

Հանձնաժողովի՝ հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությունը հեռախոսազանգով կապ է հաստատել Առուշ Առուշանյանի հետ, և վերջինս հայտնել է, որ իր էլեկտրոնային փոստի հասցեն փոխվել է, ինչով պայմանավորված՝ 01/2488-2024 գրության կրկնօրինակը 2025 թվականի հունվարի 3-ին նորից առաքվել է վերջինիս նշած էլեկտրոնային փոստի հասցեին: Համայնքապետարանից բանավոր հաստատել են գրության ստացման փաստը, սակայն 2025 թվականի հուլիսի 9-ի դրությամբ հավատարմագրային կառավարման պայմանագիր Հանձնաժողով չի ներկայացվել:

2. 2025 թվականի հուլիսի 14-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 03/2025-Ա/Վ որոշումը՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

3. 2025 թվականի հուլիսի 14-ին թիվ 01/2798-2025 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Առուշ Առուշանյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում վարույթի

շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Փոստային առաքանին Առուշ Առուշանյանը ստացել է 2025 թվականի հուլիսի 24-ին:

4. Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով Հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 11-ին կատարվել է հարցում Պետական եկամուտների կոմիտե:

***2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ***

Վարույթում քննարկվող առերևույթ խախտումների վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 4-ին Հանձնաժողովում ստացված թիվ Մ-4888-2025 գրությամբ Առուշ Առուշանյանի ներկայացուցիչ Վահե Գրիգորյանի կողմից պարզաբանում է ներկայացրել հետևյալ բովանդակությամբ.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 14-ին ընդունված՝ «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 03/2025-Ա/Վ որոշման և վարույթի վերաբերալ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներ,

Ձեր կողմից 14-07-2025թ Առուշ Առուշանյանի առնչությամբ հարուցված վարույթի վերաբերյալ ներկայացնում ենք սույն գրավոր պարզաբանումը.

Հիմք առաջին. անհամատեղելիության պահանջների բացակայությունը և մեղքի բացակայությունը.

Գործով փաստական հանգամանքների համաձայն.

Առուշ Առուշանյանը 2017թ-ից հանդիսանում է Գորիս համայնքի ղեկավար. վերընտրվել է 2021թ,

2021թ, 2022թ, 2023թ և 2024թ Առուշ Առուշյանյանի կողմից ԿԿՀ ներկայացված հայտարարագրում որևէ տվյալ Գոր Մետալ ՍՊԸ վկայակոչմամբ շահաբաժին ստանալու վերաբերյալ չէ,

Առուշ Առուշանյանը որևէ շահաբաժին չի ստացել Գոր Մետալ ՍՊԸ-ից նաև ըստ Ձեր որոշման,

Առուշ Առուշանյանի առնչությամբ նախորդիվ հարուցված չի եղել. առնվազն դրա վերաբերյալ որևէ վկայակոչում առկա չէ,

Առուշ Առուշանյանը ենթադրաբար խախտել է անհամատեղելիության պահանջը, որը դրևորվել է ՍՊԸ-ում շահաբաժինը հավատարմագրային կառավարման չհանձնելով:

Վերոգրյալի առնչությամբ հայտնում ենք, որ

Առուշ Առուշանյանին պատկանող կազմակերպության 100% բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնված տիկին Ասյա Ղազարյանին. առկա է նոտարական հաստատում. հավատարմագրային կառավարման հանձնված լինելու վերաբերյալ փաստաթղթում հստակ ամրագրված է համատարմագրային կառավարման ժամանակատվածը, պայմանագրի գործողության ժամկետը և դրանով կարգավորվող ժամանակահատվածը: Ընդ որում՝ առկա է հատուկ նշում նախորդիվ առկա հավատարմագրային հարաբերությունների առկայության մասին: Վերոգրյալը հաշվի առնելով ակնհայտ է դառնում, որ Առուշ Առուշանյանի կողմից չի խախտվել անհամատեղելիության պահանջը, Առուշ Առուշանյանը համայնքի ղեկավարը պաշտոնը ստանձնելուց հետո չի զբաղվել այնպիսի գործունեությամբ, որը կարող է դիտարկվել որպես անհամատեղելիության պահանջների խախտում, Առուշ Առուշանյանը, ըստ իր հայտարարության, հավատարմագրային կառավարման է հանձնած եղել «Գոր Մետալ» ՍՊԸ իր բաժնեմասը և դրանով պայմանավորված է նաև, որ շահաբաժին չի ստացել, 2025թ օգոստոսի 4-ին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին պայմանագիրը հաստատվել է նաև նոտարական կարգով, ներկայացվել է նաև պետական ռեգիստր:

Այսինքն՝ Առուշ Առուշանյանը՝

- պաշտոնավարման ընթացքում չի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,

- իր բաժնեմասնակցության փաստի ուժով որևէ մասնակցություն չի ունեցել ընկերության, դրա կառավարման և կամ այլ գործառույթների իրականացմանը, ներգրավված չի եղել և չի մասնակցել ընկերության կողմից կայացվող որոշումների ընդունմանը,

- որևէ շահաբաժին չի ստացել պաշտոնավարման ընթացքում,

- փաստացի չի պահպանվել նաև իր ազդեցությունն առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ,

- վերաբերելի ՍՊԸ իրեն պատկանող մասնաբաժինը հավատարմագրային կառավարման է հանձնած եղել:

- սույն գործով ծանուցումը ստանալուց հետո ձեռնամուխ է եղել առկա ֆորմալ խնդրի լուծմանը՝ նոտարական կարգով սահմանելով հավատարմագրային կառավարումը և ուղարկելով արդեն նոտարական կարգով հաստատված պայմանագիրը պետական ռեգիստրի գործակալությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Առուշ Առուշանյանի արարքներում և գործողություններում բացակայում են այնպիսի դրսևորումներ, արարքներ, գործողություն կամ անգործություն, որոնք կարող են դիտարկվել կամ համարվել որպես անհամատեղելիության՝ օրենքով սահմանված պահանջների խախտում: Այսինքն, քննարկելով անհամատեղելիության պահանջների խախտումը, էական և անկյունաքարային է նաև այն հանգամանքը, որ առևտրային կազմակերպությանը մասնակից լինելուն զուգահեռ պաշտոնատար անձի կողմից փաստացի չի պահպանվել նաև իր ազդեցությունն առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ, քանի որ վերջինս (Առուշ Առուշանյանը), ըստ էության, շահույթ հետապնդող ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացրել, ինչպես նաև որևէ ձևով ներգրավված չի եղել «ԳՈՐ Մետալ» ՍՊ ընկերության կառավարման գործառույթների իրականացմանը: Հետևաբար, սույն վարույթով քննարկվող հարցի շրջանակներում Առուշ Առուշանյանի կողմից իր ստանձնած պաշտոնի հետ անհամատեղելի գործունեություն փաստացի չի իրականացվել: Բացի այդ, պահպանելու և երաշխավորելու համար Վարչական մարմնի կողմից միասնական մոտեցումը միևնույն փաստական հանգամանքների առկայությամբ, հայտնում ենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7- րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական

լիազորությունն իրականացնել նույն ձևով: Հարկ ենք համարում վկայակոչել, որ ԿԿՀ 06-03-2020թ-ի թիվ 06/2019 եզրակացությամբ և ԿԿՀ 27-02-2023թ-ի թիվ 08/2022-2023 եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքների և սույն գործով հաստատված փաստական հանգամանքների միջև էական տարբերություն առկա չէ: Վերոնշյալ փաստերի վերլուծությունը հանգում է նրան, որ Առուշ Առուշանյանի կողմից բովանդակային առումով չեն խախտվել հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները, իսկ առկա ֆորմալ խնդիրները լուծվել են՝ ծանուցումը ստանալուց հետո: Վերոգրյալը հաշվի առնելով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներից հայցում եմ Արձանագրել Առուշ Առուշանյանի արարքներում անհամատեղելիության պահանջների խախտման բացակայությունը...»:

### *3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի գործունեությանն առնչվող տեղեկություններ*

2021 թվականի հոկտեմբերի 17-ին Առուշ Առուշանյանը համամասնական ընտրակարգով ընտրվել է Գորիս համայնքի ավագանու անդամ:

**2021 թվականի նոյեմբերի 9**-ին Գորիս համայնքի ավագանու N 91 Ա որոշմամբ՝ ստանձնել է համայնքի ղեկավարի լիազորությունները և մինչ օրս շարունակում է պաշտոնավարել որպես համայնքի ղեկավար:

### *4. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր*

1. Առուշ Առուշանյանը 2021 թվականի նոյեմբերի 9-ին Գորիս համայնքի ավագանու N 91 Ա որոշմամբ՝ ստանձնել է համայնքի ղեկավարի լիազորությունները և մինչ օրս շարունակում է պաշտոնավարել որպես համայնքի ղեկավար:

2. Ա.Առուշանյանը 2008 թվականից հանդիսանում է «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 09212042) իրական շահառուն (հայտարարագրի հաստատման ամսաթիվ՝ 14/02/2024) 100 տոկոս բաժնեմասնակցությամբ, իսկ 01.08.2008-01.11.2017թթ. հանդիսացել է ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: 2017թ.

նոյեմբերի 1-ից ընկերության գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում համայնքի ղեկավարի մայրը՝ Ասյա Ղազարյանը:

3. Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 15-ի թիվ 01/1938-2024 գրությանն ի պատասխան՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից 2025 թվականի օգոստոսի 18-ի գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝

1) «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությունը 2025 թվականի օգոստոսի 18-ի (հարցման պատասխանի ստացման) դրությամբ հանդիսանում է գործող առևտրային կազմակերպություն: ՊԵԿ տվյալների համաձայն՝ 2020-2025 թվականների ընթացքում Ընկերությունը ապահովել է իրացման շրջանառություն, մասնավորապես.

2020 թվականին՝ 627,171,796.0 ՀՀ դրամ,

2021 թվականին՝ 389,541,923.0 ՀՀ դրամ,

2022 թվականին՝ 232,697,125.0 ՀՀ դրամ,

2023 թվականին՝ 254,989,664.0 ՀՀ դրամ,

2024 թվականին՝ 288,920,095.0 ՀՀ դրամ,

2025 թվականին՝ 155,735,585.0 ՀՀ դրամ:

2) Պետական եկամուտների տվյալների համաձայն՝ Առուշ Առուշանյանը 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությունից եկամուտ չի ստացել:

4. 2025 թվականի օգոստոսի 4-ին Առուշ Առուշանյանի և Ասյա Հարությունի Ղազարյանի միջև կնքվել է «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրը, որը 2025 թվականի օգոստոսի 7-ին նաև գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

5. Հանձնաժողով ներկայացված պաշտոնատար անձի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների համաձայն՝ Ասյա Հարությունի Ղազարյանը հանդիսանում է Առուշ Առուշանյանի ծնողը:

## *5. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ*

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոնը** դասակարգվում է խմբերի՝

պետական և **համայնքային**: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ **քաղաքական**, վարչական և հայեցողական:

2. Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային քաղաքական պաշտոններն են **համայնքների ղեկավարների** և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները**:**

3. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել ***իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք,*** բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

4. Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում,** պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

5. Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանվում են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները:

6. Նույն օրենքի իմաստով **ձեռնարկատիրական գործունեություն է** համարվում՝ (…) **առևտրային կազմակերպության մասնակից,** բաժնետեր, փայատեր լինելը, **բացառությամբ այն դեպքի,** երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ **հանձնվել են հավատարմագրային կառավարման,** կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:

7. Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ): Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում

ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ **մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:**

**8. Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել՝**

**1) սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները.**

**2) բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:**

9. Նույն հոդվածի 11.1-ին մասի համաձայն՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ **փոխկապակցված անձինք**:

10. Նույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ **փոխկապակցված անձինք են** պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), **ծնողը** (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

11. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետի (սույն իրավակարգավորումը ուժի մեջ է մտել 02.01.2023թ.-ին) համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառվում են **տեղեկություններ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ:**

12. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց, **համայնքների ղեկավարների**, նրանց

տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը:**

13. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, **համայնքների ղեկավարների**, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների**, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ:

14. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

### *6. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը*

Համայնքի ղեկավարի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումն ամրագրված է «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Անհամատեղելիության պահանջներ սահմանող իրավակարգավորումներից հետևում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող օրենսդրական պահանջներն ընդգրկում են տարբեր բաղադրիչներ, այն է՝ իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքները, որոնցից յուրաքանչյուրին առնչվող իրավակարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի առանձին դրույթներում: Մասնավորպես, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի ներքո սահմանված օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկվում, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում և կարգով ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման: Նման իրավակարգավորումից հետևում է, որ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում **առևտրային կազմակերպության մասնակցությունը թույլատրելի է բացառապես այն դեպքում, երբ մասնակցի բաժնեմասն Օրենքով սահմանված կարգով հանձնվել է հավատարմագրային կառավարման**:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, մասնավորապես, չի արգելում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց որպես սեփականություն ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունում, բացառությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի (2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ մտած ՀՕ 540-Ն օրենք) 31-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերի, որով մասնավորապես սահմանվում է, որ

- հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

- առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցության (պաշտոն զբաղեցնելու) արգելքի ներքո ենթադրվում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի գործողություններից, որոնց շրջանակում ձևավորվող վարքագիծը կարող է դիտվել որպես պետական պաշտոնին զուգահեռ՝ անձի կողմից առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ ազդեցության պահպանում՝ մասնակցություն ունենալով կամ այլ կերպ ներգրավված լինելով առևտրային կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

Միաժամանակ, նշված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանափակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքով արդեն իսկ իրենց պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, այլ տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է՝ պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ **մեկ ամսվա ընթացքում** առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն (բաժնետոմս, փայ) ***ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման***՝ դրանով իսկ ապահովելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումը, ինչպես նաև բացառելով կամ

նվազագույնի հասցնելով վերջինիս մոտ շահերի բախման իրավիճակները: Նման կարգավորումներն որևէ կերպ չեն խաթարում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված, սեփականության հիմնարար իրավունքը, քանի որ անձը, հանձնելով առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման, չի փոխանցում իր սեփականության իրավունքը հավատարմագրային կառավարչին, այլ այդ կերպ իրացնում է իր՝ սեփականատիրոջ իրավունքը:

Իրավական սահմանափակումների ներքո ենթադրվում է, որ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավորվում է գործունեություն իրականացնել իր պաշտոնի նկատմամբ սահմանված իրավական որոշակի սահմանափակումների շրջանակներում: Հետևաբար, նշանակվելով հանրային պաշտոնում՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ պաշտոնատար անձն ստանձնում է նաև օրենքով սպառիչ կերպով սահմանված սահմանափակումների ներքո գործելու պարտականություն, որը հետապնդում է տվյալ պարագայում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բացառապես իր պաշտոնեական լիազորությունների և գործառույթների իրականացումն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց մուտքը պետական մարմիններ բացառելու օրինաչափ նպատակը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջների **նպատակը շահերի բախման հնարավոր իրավիճակների բացառումն է, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց աշխատաժամանակի, որպես հանրային ռեսուրսի, պատշաճ տնօրինման ապահովումն է:** Շահերի բախման հնարավոր իրավիճակների բացառման նպատակով օրենսդրությամբ նաև սահմանված են առևտրային կազմակերպության բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու և որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալու սահմանափակումները, մասնավորապես՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի **հավատարմագրային կառավարիչ** կարող են լինել՝

սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված **անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները**: Որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ **փոխկապակցված անձինք**:

Քննարկվող դեպքում, Առուշ Առուշանյանը 2021 թվականից զբաղեցնելով համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսացել է «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատերը և միայն 2025 թվականի օգոստոսի 4-ին կնքել է «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրը, որի համաձայն՝ «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությունում իր ունեցած 100% բաժնեմասը 5 տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնել հանրային պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված ֆիզիկական անձին՝ Ասյա Հարությունի Ղազարյանին, որի արդյունքում թույլ է տվել Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ, 11-րդ և 11.1-րդ մասերով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում, քանի որ գործող, իրացման շրջանառություն ունեցող Ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնվել Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև հավատարմագրային կառավարիչ է հանդիսացել Օրենքի իմաստով հավատարմագրային կառավարիչ հանդես գալու իրավունք չունեցող անձը:

Այսինքն՝ Օրենքի համատեքստում խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ տարածվող անհամատեղելիության պահանջները, և դա դրսևորվել է Առուշ Առուշանյանի կողմից պաշտոն ստանձնելուց հետո գործող և իրացման շրջանառություն ունեցող Ընկերության՝ իր բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետի և հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջի խախտմամբ հավատարմագրային կառավարման հանձնելով:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն ընդգծում է, որ սույն դեպքում կարևոր նշանակություն ունի «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջը:

Տվյալ դեպքում հավատարմագրային կառավարիչ է հանդիսանում այնպիսի անձ, ով Օրենքի իմաստով չունի հավատարմագրային կառավարիչ հանդիսանալու իրավունք:

Միաժամանակ, Օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի իրավակարգավորումից հետևում է, որ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները: Նույն հոդվածի 11.1-րդ մասի համաձայն՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք:

Ընդ որում, էական է ընդգծել, որ օրենսդրի նման պահանջը բխում է հանրային ծառայության համակարգում անաչառության և շահերի բախման կանխարգելման անհրաժեշտությունից այն հաշվառմամբ, որ ֆիզիկական անձը չունի այնպիսի անկախություն և հաշվետվողականության երաշխիքներ, որոնք կբացառեն համայնքի ղեկավարի ազդեցությունը կառավարվող բաժնեմասի նկատմամբ:

Հետևապես, օրենսդրական պահանջից հետևում է, որ նման կառավարման փոխանցումը կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անհատ ձեռնարկատերերի կամ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Հանձնաժողովը նաև ընդգծում է, որ Օրենքով սահմանվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի հետ փոխկապակցված անձի՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալու արգելք:

Նշված արգելքը միտված է կանխելու այն իրավիճակները, երբ հավատարմագրային կառավարման հանձնելու պահանջը իրականացվում է ձևականորեն, մասնավորապես՝ փոխկապակցված կամ փոխադարձ կախվածության հարաբերություններ ունեցող անձանց ներգրավմամբ:

Նման կարգավորումը նպատակ ունի բացառել այնպիսի իրավիճակների առաջացումը, երբ պաշտոնատար անձը, թեև ձևապես իր բաժնեմասն հանձնել է

հավատարմագրային կառավարչին, սակայն փաստացի շարունակում է պահպանել ազդեցությունը առևտրային կազմակերպության գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով կիրառելի իրավական նորմերը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի պահանջը իմպերատիվ բնույթի է, հետևապես հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնումը հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված ֆիզիկական անձի անթույլատրելի է:

Ըստ այդմ, Հանձնաժողովը փաստում է, որ համայնքի ղեկավարի համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ սահմանված անհամատեղելիության պահանջները ուղղված են ոչ միայն համայնքի ղեկավարի գործունեության թափանցիկությանն ու անաչառությանը, այլև համայնքային իշխանության նկատմամբ հանրային վստահության ապահովմանը: Հետևապես, համայնքի ղեկավարի՝ որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի՝ առևտրային կազմակերպության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու Օրենքով սահմանված կարգավորումները կարևոր նշանակություն ունեն պաշտոնատար անձի գործունեության թափանցիկության ապահովման, շահերի բախման կանխարգելման և հանրային վստահության պահպանման տեսանկյունից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (…) վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական որևէ հայեցողական լիազորություն՝ իրականացրել որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացրել նույն ձևով:

Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված 2021 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 03/2021-Ա/Վ և 2024 թվականի մարտի 11-ի թիվ 02/2022-2024-Ա/Վ և եզրակացություններին, որոնցով արձանագրել է անհամատեղելիության

պահանջների խախտման առկայություն՝ որպես պատճառաբանություն նշելով, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը որոշակի ժամանակում արդեն իսկ դրսևորել է անգործություն՝ չպահպանելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք սահմանող իրավանորմը՝ հանդիսանում է անհամատեղելիության պահանջի խախտում թույլ տված անձ, անկախ այն հանգամանքից, որ կոնկրետ պահի բաժնեմասը, այնուամենայնիվ օտարում է կամ հանձնում է հավատարմագրային կառավարման:

Հանձնաժողովը հարկ է համարում Առուշ Առուշանյանի կողմից կատարված առերևույթ խախտմանն անդրադառնալ Օրենքի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բովանդակային տեսանկյունից, ուստի նշված արարքն անհրաժեշտ է համարում դիտարկել դրա բովանդակային դրսևորումների շրջանակում՝ գնահատելով սույն գործով ձեռք բերված ապացույցները:

Ընդ որում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև այն իրողությունը, որ իր կողմից նախորդիվ կայացրած եզրակացություններով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու օրենսդրական արգելք սահմանող իրավանորմի պահանջների առնչությամբ արձանագրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բովանդակային խախտումների բացակայություն այն հանգամանքների հաշվառմամբ, որ վարույթի ընթացքում իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված են համարվել այն փաստական տվյալները, որոնց համաձայն՝ գործող օրենսդրական իրավակարգավորումներին համապատասխան հավատարմագրային կառավարման չհանձնելու պարագայում ընկերությունը փաստացի գործունեություն չի իրականացրել, ինչպես նաև իրացման շրջանառություն և շահույթ չի ստացվել: Մինչդեռ, սույն գործով իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված է համարվում Ընկերության փաստացի **գործունեություն ծավալելու, ինչպես նաև իրացման շրջանառություն ունենալու հանգամանքը**:

Վերոնշյալ փաստերի վերլուծությունը հանգում է նրան, որ Առուշ Առուշանյանի կողմից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

Անդրադառնալով վարույթի մասնակցի ներկայացուցչի կողմից ներկայացված պարզաբանմանը, համաձայն որի՝ «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը

փաստացի հանձնված է եղել հավատարմագրային կառավարման և սույն գործով ծանուցումը ստանալուց հետո ձեռնամուխ է եղել առկա ֆորմալ խնդրի լուծմանը՝ նոտարական կարգով սահմանելով հավատարմագրային կառավարումը և ուղարկելով արդեն նոտարական կարգով հաստատված պայմանագիրը պետական ռեգիստրի գործակալությանը, Հանձնաժողովը կարևոր է համարում նշել, որ վարույթի մասնակցի կողմից ներկայացված «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվել է 2025 թվականի օգոստոսի 4-ին: Նշված պայմանագրի 1.6 կետի համաձայն՝ կողմերի հայտարարությամբ իրենց միջև պայմանագրային իրավահարաբերությունները սկսվել են 27.10.2017 թվականից: Միաժամանակ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 40.1-ին հոդվածի համատեքստում՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրը ենթակա է գրանցման, իսկ քննարկվող դեպքում «ԳՈՐ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ գրանցվել է միայն 2025 թվականի օգոստոսի 7-ին:

Անդրադառնալով վարույթի մասնակցի ներկայացուցչի կողմից վկայակոչված Հանձնաժողովի կողմից նախկինում կայացված թիվ 06/2019 և թիվ 08/2022-2023 եզրակացություններով հաստատված փաստական հանգամանքներին՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ վերոնշյալ եզրակացություններով հաստատված փաստական տվյալներն էականորեն տարբերվում են սույն գործով հաստատված փաստական հանգամանքներից:

Մասնավորապես, Հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 27-ի թիվ 08/2022-2023 եզրակացության համաձայն՝ «... «ԱԼՄԱԶ-1» ՍՊ Ընկերությունը 2021 և 2022 թվականների ընթացքում իրացման շրջանառություն չի ապահովել: Վարույթի իրականացման շրջանակներում ձեռք բերված մեկ այլ փաստական տվյալի համաձայն՝ Ընկերությունը 2021 և 2022 թվականների ընթացքում հարկվող շահույթ չի ապահովել (ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվություն): Տվյալ

պարագայում, թեև Ընկերության գործունեության դադարեցման վերաբերյալ տվյալներ առկա չեն, այնուամենայնիվ Ընկերությունը 2021 և 2022 թվականների ընթացքում **փաստացի գործունեություն չի իրականացրել, իրացման շրջանառություն, ինչպես նաև շահույթ չի ապահովել...»:**

Վարույթի մասնակցի ներկայացուցչի կողմից վկայակոչած Հանձնաժողովի 2020 թվականի մարտի 6-ի թիվ 06/2019 եզրակացությամբ հաստատված տվյալների համաձայն՝ «...Հայկ Մարությանը Երևանի քաղաքապետի պաշտոնը ստանձնելուց հետո պահպանել է «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ում, «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ում և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ում իր բաժնեմասը, սակայն նշված ընկերությունները փաստացի գործունեություն չեն ծավալել, և եկամուտ, շահույթ չեն ապահովել: Օրենքի պահանջի ձևական մեկնաբանությամբ «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ում, «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ում և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ» «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ում բաժնեմասը հավատարմագրային կառավարման չհանձնելը հանդիսանում է անհամատեղելիության պահանջի խախտում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված ընկերությունները փաստացի գործունեություն չեն ծավալել, ըստ էության, օրենքի պահանջների խախտում չի արձանագրվել...»:

Այսպիսով, վերոնշյալ եզրակացություններով հաստատված փաստական տվյալները էականորեն տարբերվում են սույն գործով հաստատված փաստական տվյալներից, այն է՝ «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության փաստացի **գործունեություն ծավալելու, իրացման շրջանառություն ունենալու հանգամանքով, ինչպես նաև ընկերության բաժնեմասի հավատարմագրային կառավարումը փոխկապակցված ֆիզիկական անձին հանձնելու հանգամանքով:**

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը եզրահանգում է, որ սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում Առուշ Առուշանյանն իր գործողություններով չի պահպանել Օրենքի 31-րդ հոդվածով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

**ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.**

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի կողմից խախտվել են հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

**ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**